(կազմված է 15.04.2022թ. և բաղկացած է 12 թերթից)

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Նիկա» ենթակառուցվածքային
զարգացման բարեգործական հիմնադրամ
հիմնադրելու մասին հիմնադիրների
15.04.2022թ. որոշմամբ

Լիազորված անձ՝ Մերի Մամիկոնյան

_____ _____

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱ-
ԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
"17" 05 2022 թ.

գրանցման համար՝ 222.160.1238173

ՀՎՀՀ՝ 01323082

02

աշխատակից՝ _____

«ՆԻԿԱ» ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ՆԻԿԱ» ենթակառուցվածքային զարգացման բարեգործական հիմնադրամը (այսուհետ՝ «Հիմնադրամ») քաղաքացիների կամավոր զույքային վճարումների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է տնտեսական, սոցիալական, կրթական, գիտական, մշակութային, առողջապահական առաջխաղացման, բարեգործական և այլ հանրօգուտ նպատակներ:

1.2. Հիմնադրամը գործում է ՀՀ սահմանադրության, ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն Կանոնադրության հիման վրա:

1.3. Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ դրանց օրենսդրությանը համապատասխան:

1.4. Հիմնադրամի գործունեության սկզբունքներն են՝ օրինականությունը, իրավահավասարությունը, թափանցիկությունը, նախաձեռնողականությունը, հետևողականությունը, մարդասիրությունը:

1.5. Հիմնադրամի պաշտոնական լեզուն հայերենն է:

1.6. Հիմնադրամի անվանումն է. հայերեն՝ «ՆԻԿԱ» ենթակառուցվածքային զարգացման բարեգործական հիմնադրամ, անգլերեն «NIKA» infrastructural development charitable foundation, ռուսերեն՝ благотворительный фонд инфраструктурного развития «НИКА»:

1.7. Հիմնադրամի կարճ անվանումն է. հայերեն՝ «ՆԻԿԱ» հիմնադրամ, անգլերեն «NIKA» foundation, ռուսերեն՝ фонд «НИКА»:

1.8. Հիմնադրամի գտնվելու հասցեն՝ ՀՀ, 0004 ք. Երևան, Ա. Բաբաջանյան 101/1, բն. 23:

1.9. Հիմնադրամի հիմնադիրներն են՝

Անուն, ազգանուն, հայրանուն	Ծննդյան թիվ	Քաղաքացի-ություն	Անձնագրի համար	Տրված է	Հասցե
Ազնեսա Հրանտի Սարգսյան	[redacted]				
Վիկտորիյա Իգորի Աղաջանովա					
Մերի Արտյոմի Մամիկոնյան					

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Հիմնադրամի հնարավոր շահառուներն են Հայաստանի, Արցախի, սփյուռքաշատ այլ երկրների հասարակական, առողջապահական, կրթական, մշակութային, գիտական և ռազմավարական ոլորտների ընկերությունները:

2.2. Հիմնադրամի նպատակներն են՝

2.2.1. Գործունեություն ծավալել Հայաստանի, Արցախի և Սփյուռքի առջև ծառացած բազմաբնույթ ենթակառուցվածքային հիմնախնդիրների լուծման ուղղությամբ:

2.2.2. Նպաստել Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

2.2.3. Աջակցել Հայաստանի հասարակական, առողջապահական, կրթական, մշակութային, գիտական ենթակառուցվածքային համակարգերի ստեղծմանը, զարգացմանը և կատարելագործմանը:

2.2.4. Նախաձեռնել և աջակցել Հայաստանի, Արցախի և սփյուռքաշատ այլ երկրներում իրականացվող հայանպաստ ռազմավարական և ենթակառուցվածքային ծրագրերի իրագործմանը:

2.2.5. Նպաստել հասարակական, առողջապահական, կրթական, մշակութային, գիտական և ռազմավարական ոլորտների ծրագրերի իրականացմանը, զարգացմանն ու տարածմանը:

2.3. Հիմնադրամի խնդիրներն են՝

2.3.1. Նպաստել հասարակական, առողջապահական, կրթական, մշակութային, գիտական և ռազմավարական ոլորտ(ներ)ի ենթակառուցվածքային հայեցակարգերի և ծրագրերի մշակումը և իրականացումը, ընդհանուր նպատակներ հետապնդող տարբեր նախաձեռնություններին աջակցումը;

2.3.2. Հասարակական, առողջապահական, կրթական, մշակութային, գիտական և ռազմավարական ոլորտ(ներ)ում գործող ընկերությունների (առևտրային և ոչ առևտրային) ստեղծումը և/կամ շահագործումը:

2.3.3. Իր նպատակներն իրագործելու համար հասարակական այլ կազմակերպությունների հետ (այդ թվում օտարերկրյա և միջազգային) համագործակցությունը:

2.3.4. Իր կանոնադրական խնդիրների շրջանակում սահմանված կարգով պետական ծրագրերին մասնակցությունը:

2.3.5. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությունը:

2.3.6. Օրենքով չարգելված և Հիմնադրամի նպատակներից բխող ցանկացած այլ գործունեության իրագործումը:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Հիմնադրամի գործունեությունը անժամկետ է:

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԱՐՉԱԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

Հիմնադրամի վարչակառավարչական ծախսերը կազմում են հիմնադրամի ընդհանուր տարեկան ծախսերի 20 տոկոսը:

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնադրամը՝

5.1. ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ պետական գրանցման պահից,

5.2. ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և պարտականությունները,

5.3. ինքնուրույն է որոշում իր կազմակերպչական կառուցվածքը,

5.4. ունի իրավունք նյութապես և այլ կերպ աջակցել իրավաբանական և ֆիզիկական անձանց, անցկացնել գրանտային մրցույթներ և իրականացնել այլ գործունեություն կանոնադրության նպատակների իրականացման շրջանակներում,

5.5. ունի իր անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով) և կարող է ունենալ խորհրդանիշ,

5.6. կարող է ունենալ իր անվանումը պարունակող դրոշմներ, սերտիֆիկատներ, լիազորագիրեր, ձևաթղթեր, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ, անհատակացնող այլ միջոցներ,

5.7. կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ,

5.8. օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, ստանալ, վարձակալել կամ այլ պայմաններով, այդ թվում՝ անվճար օգտագործել անշարժ գույք, հիմնական միջոցներ, տրանսպորտ, օրենքով չարգելված այլ գույք,

5.9. օտարել, վարձակալության և անվճար օգտագործման հանձնել իր ենթակայության տակ գտնվող ցանկացած անշարժ և շարժական գույք ՀՀ օրենսդրության սահմաններում,

5.10. ունի ինքնուրույն հաշվեկշիռ,

5.11. ինքնուրույն է կազմակերպում իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ արտարժույթով:

5.12. կարող է օրենքով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ ՀՀ դրամով և/կամ արտարժույթով:

5.13. կարող է դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող,

5.14. կարող է ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ,

5.15. կարող է կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և գործարքներ,

5.16. կարող է իրականացնել ինքնուրույն արտաքին գործունեություն, այդ թվում՝ կնքել համաձայնագրեր օտարերկրյա ոչ առևտրային և ոչ կառավարական կազմակերպությունների

հետ, կնքել համաձայնագրեր և պայմանագրեր պետական և կառավարական կազմակերպությունների հետ, անդամակցել միջազգային հասարակական կազմակերպություններին, իր անդամներին և այլ անձանց գործուղել արտասահմանյան երկրներ, հրավիրել այլ երկրներից քաղաքացիների, ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ այլ պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան,

5.17. կարող է օրենքով սահմանված կարգով իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն,

5.18. կարող է ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից,

5.19. իրավունք ունի ՀՀ օրենքով չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում արժեթղթեր, տիրապետել և տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտները,

5.20. իրավունք ունի տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին, հիմնադրել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներ,

5.21. հոգաբարձուների խորհուրդը իրավունք ունի Հիմնադրամի Կանոնադրության մեջ կատարել փոփոխություններ, հաստատել նոր խմբագրությամբ Կանոնադրություն,

5.22. իրավունք ունի իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն,

5.23. իր իրավունքների սահմանափակման կարող է ենթարկվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով,

5.24. պարտավոր է գործել ՀՀ Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև սույն կանոնադրությանը համապատասխան,

5.25. պարտավոր է օրենքով սահմանված կարգով հրապարակել հաշվետվություն իր գործունեության մասին,

5.26. պարտավոր է օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,

5.27. պարտավոր է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին,

5.28. պարտավոր է ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթն օգտագործել միայն իր կանոնադրական նպատակների համար,

5.29. իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իրեն պատկանող գույքով՝ օրենքով սահմանված կարգով: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր հիմնադիրների պարտավորությունների համար, իսկ վերջիններս պատասխանատվություն չեն կրում Հիմնադրամի պարտավորությունների համար:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

6.1. Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

6.1.1. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

6.1.2. Գործադիր տնօրենը/ այսուհետ նաև Տնօրեն/

.2. Հիմնադրամի բարձրագույն ղեկավար մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ), որը բաղկացած է 3 (երեք) անդամներից: Խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ հիմնադիրները,

6.3. Հոգաբարձուների խորհրդի լիազորությունների ժամկետը երկու տարի է: Խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը ավարտվում է Խորհրդի լիազորությունների ժամկետի ավարտման հետ մեկտեղ, որից հետո Հիմնադրամի Խորհրդի իրավասությունն է քննարկել և որոշումներ ընդունել միայն Հիմնադրամի Խորհրդի կազմման հետ կապված հարցերով:

6.4. Խորհրդի ընտրության կարգը՝

6.4.1. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը առաջին անգամ կազմավորվում է հիմնադիրների կողմից միաձայն որոշմամբ:

6.4.2. Խորհրդի անդամի լիազորությունները դադարում են՝

6.4.2.1. տվյալ անդամի կողմից Հոգաբարձուների խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման վրա: Այս դեպքում լիազորությունները համարվում են դադարած դիմումի ներկայացման հաջորդ օրվանից,

6.4.2.2. նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով,

6.4.2.3. լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում,

6.4.2.4. եթե դադարել են հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի կամ կեսից ավելիի լիազորությունները,

6.4.2.5. դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում,

6.4.2.6. նրան առաջադրած անձի որոշմամբ, եթե նրան առաջադրել է Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը,

6.4.2.7. նրա մահվան դեպքում,

6.4.2.8. եթե նա նշանակվել է ի պաշտոնե՝ նրա զբաղեցրած պաշտոնին այլ անձ նշանակելու կամ նրա զբաղեցրած պաշտոնի վերացման դեպքում:

6.4.3 Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով, ոչ ուշ, քան հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին գործադիր տնօրենի ծանուցումն ստանալու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում:

6.4.4 Հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում հիմնադրամի գործադիր տնօրենը տեղեկացնում է հիմնադիրներին, հոգաբարձուների խորհրդի անդամներին նշանակած անձանց կամ մարմիններին, հիմնադրամի մարմիններին:

6.4.5 Եթե հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարման դեպքում երկամսյա ժամկետում հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի

նշանակվում, ապա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը երկամսյա ժամկետում նշանակում է 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ:

6.4.6 Ժամանակավոր խորհուրդը պարտավոր է քայլեր ձեռնարկել Հիմնադրամների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով հոգաբարձուների խորհրդի կազմի համալրման համար:

6.5 Ժամանակավոր խորհուրդն իրավասու է՝

6.5.1 իրականացնելու հիմնադրամի գործունեությունը շարունակելուն ուղղված՝ Հիմնադրամների մասին ՀՀ օրենքով հոգաբարձուների խորհրդին վերապահված լիազորություններ,

6.5.2 դիմելու դատարան՝ հիմնադրամը լուծարելու համար:

6.6 Եթե ժամանակավոր խորհուրդ նշանակելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա ժամանակավոր խորհուրդը պարտավոր է դիմել դատարան՝ հիմնադրամը լուծարելու համար:

6.7 Հոգաբարձուների խարհուրդը կարող է որոշում ընդունել խորհրդի անդամների քանակի փոփոխության մասին:

6.8 Խորհրդի ժամկետը լրանալուց հետո ոչ ուշ, քան վաթսուն օրվա ընթացքում հոգաբարձուների խորհուրդը նիստ է հրավիրում նոր Հոգաբարձուների խորհրդի կազմը հաստատելու համար: Հոգաբարձուների խորհրդի նոր կազմ են առաջադրում հիմնադիրները: Եթե Խորհրդի լիազորությունների ժամկետի ավարտից հետո երեսուն (30) օրվա ընթացքում թեկնածուներ չեն առաջադրվում, ապա այդպիսի առաջարկություն կարող է ներկայացնել Հոգաբարձուների խորհրդի անդամներից յուրաքանչյուրը: Հոգաբարձուների խորհրդի նոր կազմը ընտրվում է հոգաբարձուների խորհրդի կողմից՝ ձայների երկու երրորդով:

6.9 Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի իրավասությանն են պատկանում.

6.9.1 Հիմնադրամի ռազմավարական և ենթակառուցվածքային ծրագր(եր)ի հաստատումը,

6.9.2 Հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը,

6.9.3 Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը,

6.9.4 Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,

6.9.5 Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նոր անդամների ընտրությունը,

6.9.6 Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,

6.9.7 Հոգաբարձուների խորհրդի նախագահի, հիմնադրամի տնօրենի և կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշման ընդունումը,

6.9.8 Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը,

6.9.9 Տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման և դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը,

6.9.10 Հիմնադրամի ֆինանսատեխնիկական գործունեության վերահսկումը,

6.9.11 Հիմնադրամի տնօրենի տարեկան հաշվետվությունների լսումը,

6.9.12 Իր որոշումների կայացման ընթացքի վերահսկումը,

6.9.13 Հիմնադրամի աուդիտ իրականացնող իրավաբանական անձի (աուդիտոր) ընտրությունը,

6.9.14 Հիմնադրամի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց աշխատանքի վարձատրության մասին որոշումների ընդունումը,

6.9.15 Օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև Հիմնադրամի այլ մարմինների չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

6.10 Հոգաբարձուների խորհուրդը ընդունում է որոշումներ նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ: Հոգաբարձուների խորհրդի նիստերի կամ որոշումներ ընդունելու քվորումը ապահովված է, եթե նիստին կամ որոշման ընդունմանը մասնակցում են հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին:

6.11 Հոգաբարձուների խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից:

6.12 Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև հոգաբարձուների խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացնելուց 30 օրվա ընթացքում: Եթե նշված ժամկետներում Խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստ կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք:

6.13 Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով:

6.14 Հոգաբարձուների խորհրդի նախագահը.

6.14.1 Հոգաբարձուների խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները: Հոգաբարձուների խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

6.14.2 Կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,

6.14.3 Գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,

6.14.4 Կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,

6.14.5 հոգաբարձուների խորհրդի քննարկմանն է ներկայացնում հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ:

6.14.6 Հոգաբարձուների խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, կատարում է անդամներից մեկը:

6.14.7 Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը գործադիր տնօրենն է, որը ընտրվում և պաշտոնից ազատվում է Հիմնադրամի Խորհրդի կողմից: Գործադիր տնօրենի պաշտոնում առաջին անգամ նշանակումը կատարվում հիմնադիրների կողմից միաձայն՝ հիմնադրելու մասին հիմնադիրների որոշման հիման վրա:

6.15 Հիմնադրամի գործադիր տնօրենը

6.15.1 Ղեկավարում է Հիմնադրամի ընթացիկ գործունեությունը:

6.15.2 Տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Հիմնադրամի անունից, ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում, Արցախում և օտարերկրյա պետություններում, գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր, սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային, բանկերում բացում է Հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

6.15.3 Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում է դրանց կատարումը,

6.15.4 Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին. Աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

7 ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

7.1 Հոգաբարձուների խորհրդի որոշումները

7.1.1 Հոգաբարձուների խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հոգաբարձուների խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Հոգաբարձուների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ,

7.1.2 Հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրության և ազատման, հիմնադրամի գործադիր տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև հիմնադրամի անվանման փոփոխության, լուծարման և կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման մասին որոշումներն ընդունվում են հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

7.1.3 Հոգաբարձուների խորհուրդը հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշումներն ընդունում է հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ,

7.1.4 Եթե հոգաբարձուների խորհրդի նիստում քննարկվում է հիմնադրամի խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) զույգային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա հոգաբարձուների խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

8. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

8.1 Հիմնադրամն իր կանոնադրական նպատակները իրականացնելու համար կարող է ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ինչպես Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում, և օտարերկրյա պետություններում:

8.2 Ներկայացուցչությունները և մասնաճյուղերն իրավաբանական անձինք չեն ու գործում են Հիմնադրամի Խորհրդի կողմից հաստատված կանոնադրության հիման վրա:

8.3 Ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարները նշանակվում են Հիմնադրամի գործադիր տնօրենի կողմից և գործում են նրա լիազորագրի հիման վրա:

9. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

9.1 Հիմնադրամի գույքը հանդիսանում է Հիմնադրամի սեփականությունը:

9.2 Հիմնադրամի սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց:

9.3 Հիմնադրամի սեփականության ներքո գտնվող գույքի քանակը և արժեքը չի սահմանափակվում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

9.4 Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

9.5 Հիմնադրամի նյութական միջոցների ձևավորման աղբյուրներն են.

9.5.1 հիմնադիրների ներդրումները,

9.5.2 ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվություններն ու նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները,

9.5.3 դրամական մուտքերը պետական բյուջեից,

9.5.4 դրամաշնորհները,

9.5.5 հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,

9.5.6 հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից (մշակութային և այլ միջոցառումների միջոցով գումարների հայթայթում),

9.5.7 օրենքով չարգելված այլ աղբյուրները:

9.6 Միջոցների տրամադրումը հիմնադրամին ենթակա է Հիմնադրամի ընդունմանը կամ մերժմանը:

9.7 Հիմնադրամն օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով իր հայեցողությամբ տիրապետում, տնօրինում և օգտագործում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն կարող է օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

9.8 Հիմնադրամի սեփականությունը գտնվում է ՀՀ պաշտպանության ներքո, այն չի կարող բռնագրավվել կամ առգրավվել՝ բառացությամբ ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

9.9 Հիմնադրի, ինչպես նաև այլ անձանց կողմից հիմնադրամին որպես սեփականություն հանձնած գույքը հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքը ուղղում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացմանը:

9.10 Հիմնադրամի սկզբնական գույքի արժեքն է յոթանասուն հազար (70000) դրամ, որը ձևավորվել է հիմնադիրների համամասնական ներդրման հաշվին:

10. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

10.1 Հիմնադրամի վերակազմակերպումը՝ միաձուլումը և միացումը կատարվում է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ Խորհրդի որոշմամբ:

10.2 Հիմնադրամի լուծարումը հանգեցնում է դրա դադարմանը՝ առանց փոխանցելու Հիմնադրամի իրավունքները և պարտականությունները այլ անձանց:

10.3 Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:

10.4 Հիմնադրամը կարող է լուծարվել՝

10.4.1 եթե հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ,

10.4.2 եթե հնարավոր չէ հասնել հիմնադրամի նպատակներին և հնարավոր չէ կատարել այդ նպատակների անհրաժեշտ փոփոխություններ,

10.4.3 հիմնադրամի կողմից իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներից շեղվելու դեպքում,

10.4.4 օրենքով նախատեսված այլ դեպքերում:

10.5 Հիմնադրամի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

10.6 Հիմնադրամը լուծարվում է Հիմնադրամների մասին օրենքով սահմանված կարգով:

Սույն կանոնադրությունը բաղկացած է տասներկու (12) էջից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԿԱԼՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
02